



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.ysu.am

№ 174 «__25__»__06__2018 թ.

Արձանագրություն N 174

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2018թ-ի հունիսի 25-ի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 28 (քսանութ) անդամներից 19-ը:

Օրակարգ

1. 2017-2018թթ. ուս. տարվա ավարտական քննությունների արդյունքների քննարկում /զեկ.՝ ղեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
2. 2017-2018թթ. ուս. տարվա ուսումնական խորհրդատուների հաշվետվություն:
3. Թեկնածուական ատենախոսության թեմայի մասնագիտական շիֆրի փոփոխման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
4. Թեկնածուական ատենախոսության թեմաների և գիտական ղեկավարի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
5. Թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի փոփոխման և նոր ղեկավարի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար, դոցենտ Ա. Իսրայելյան/:
6. Գիտական աշխատությունների հրատարակության երաշխավորության հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
7. Ամբիոնի վարիչի պաշտոնի, դոցենտի պաշտոնի և դոցենտի կոչման դիմումների քննարկում և մրցույթի անցկացում /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
8. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. 2017-2018թթ. ուս. տարվա ավարտական քննությունների արդյունքներն ընդունել ի գիտություն:
2. 2017-2018թթ. ուս. տարվա ուսումնական խորհրդատուների հաշվետվության արդյունքները գնահատել բավարար:
3. Փոխել ՀՌՀ հայցորդ Գ. Սոլախյանի թեկնածուական ատենախոսության մասնագիտական շիֆրը՝ ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտական շիֆրի փոխարեն հաստատել ԻԳ.00.01-«Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտական շիֆրը, ատենախոսության թեման և ղեկավարը թողնելով նույնը:
4. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները.
ա/Հայ-ռուսական համալսարանի քաղաքագիտության ամբիոնի հայցորդ Յ. Մակարյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Անմիջական ժողովրդավարության ձևերը Հայաստանի Հանրապետության պետական իշխանության իրագործման շրջանակներում (իրավաքաղաքական վերլուծություն)», ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային

հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Տ. Քոչարյանին:

5. Հաստատել թեկնածուական ատենախոսության գիտական նոր ղեկավար.
ա/ ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի հեռակա ասպիրանտ Տ. Մանասյանի ատենախոսության գիտական ղեկավար ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Ենգոյանի փոխարեն հաստատել փ.գ.դ. Հ. Մանուչարյանին:
բ/ ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի հեռակա ասպիրանտ Ա. Գալիկյանի ատենախոսության գիտական ղեկավար ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Ենգոյանի փոխարեն հաստատել ք.գ.դ., դոցենտ Խ. Գալստյանին:
գ/ ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի հեռակա ասպիրանտ Ն. Տիրատուրյանի ատենախոսության գիտական ղեկավար ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Ենգոյանի փոխարեն հաստատել ք.գ.դ., դոցենտ Խ. Գալստյանին:
6. Երաշխավորել հրատարակության՝
ա/ ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դոցենտ Ա. Աբրահամյանի, դասախոսներ Ս. Մկրտչյանի և Ռ. Մելիքյանի «**Diplomacy and Press**» վերնագրով ուսումնական ձեռնարկը:
բ/ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ղեկան, պ.գ.դ., պրոֆեսոր Գ. Պետրոսյանի «Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. հայոց անկախ պետականության կերտումը (1917թ. փետրվար-1918թ. հունիս)» աշխատությունը:
գ/ Ա. Մնացականյանի «**Քաղաքագիտական բառարան**»-ը:
7. Ընտրել՝ ա/ հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել ամբիոնի վարիչի պաշտոնի համար Ա. Ենգոյանի և Վ. Պետրոսյանի, դոցենտի պաշտոնի համար Ա. Ալեքսանյանի, Գ. Բալասանյանի, Ն. Գալստյանի, Ա. Իսրայելյանի, Վ. Պետրոսյանի, Ա. Ղևոնդյանի, Ս. Վարդազարյանի և դոցենտի կոչման համար Հ. Նազարյանի անունները:
բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի թվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 28 անդամներից քվեարկությանը մասնակցել են 19-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝
1. Ամբիոնի վարիչի պաշտոնի համար՝
Ենգոյան Աշոտ-19 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:
Պետրոսյան Վահրամ-19 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:
2. Դոցենտի պաշտոնի համար՝
Ալեքսանյան Աշոտ-19 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:
Բալասանյան Գրիգոր- 19 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:
Գալստյան Նարեկ-19 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:
Իսրայելյան Արթուր-17 կողմ, դեմ 2, անվավեր քվեաթերթիկ չկա:
Ղևոնդյան Ալեն-18 կողմ, դեմ 1, անվավեր քվեաթերթիկ չկա:
Վարդազարյան Մարութ-19 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:
Պետրոսյան Վարդուհի-19 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:
3. Դոցենտի կոչման համար՝
Նազարյան Հայկ-19 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Գ. Պետրոսյան

Գիտական խորհրդի քարտուղար, դոցենտ

Ա. Իսրայելյան

Իսկականի հետ ճիշտ է՝